



ԱԼԱՎԵՐԴԻ ՕՐՀՈՒՄ ԿԵՆՏՐՈՆ
 ԲՆԱՊԱՏՎՈՒՄՆԵՐԻ ՏԵԼԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
PUBLIC ENVIRONMENTAL INFORMATION CENTRE OF ALAVERDI

ՀՀ Լոռու մարզ, ք.Ալավերդի,
 Չորավար Անդրանիկի 8/1, 403 սենյակ
 հեռ. (+374) 25324114, 91199324
 էլ. փոստ info_alaverdi@earthua.am
 anushkevovyan@rambler.ru

Lori, Alaverdi,
 Zoravar Andranik str. 8/1, 403
 Tel. (+374) 25324114, 91199324,
 E-mail info_alaverdi@earthua.am
 anushkevovyan@rambler.ru

ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների
 Նախարար պարոն
 Երվանդ Զախարյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն նախարար.

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27, 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացրած Օրհուսի համաձայնագրը և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը՝ որպես պատասխանատու մարմին, Յնդրում եմ Ալավերդու Օրհուս կենտրոնին տրամադրել տեղեկատվություն հետեւյալի մասին.

«Վալլերս» խմբի ընկերությունների մեջ մտնող «Թեդուտ» ՓԲԸ-ն նախատեսում է Լոռու մարզի անտառային տարածքներում, Շնող գետի ավազանում, իրականացնել պղնձի եւ մոլիբդենի որոնման աշխատանքներ:

1. Ե՞րբ է ներկայացվել հայտը եւ ու՞մ կողմից
2. Հայտի համաձայն ի՞նչ աշխատանքներ են նախատեսված
3. Ի՞նչ տիրույթում եւ ո՞ր տարածքներում են նախատեսվում իրականացնել ընդերքի ուսումնասիրության աշխատանքներ
4. Ի՞նչ ազդակիր համայնքներ են ներառված
5. Ձեր կողմից ե՞րբ է տրամադրվել ուսումնասիրության թույլտվություն

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան է տրվում այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30օրյա ժամկետ): Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու մեր հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում ենք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող ենք ուղղել հարցումը:

Շնորհակալություն:

Հարգանքով՝

Ալավերդու Օրհուս կենտրոնի համակարգող

Անուշ Էվոյան

24.08.2015թ.